ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2022 թվականի N 1225 - Ա

«ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ+ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի «է» և 6-րդ մասի «զ» կետերը, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրում-ների կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդում փայերի ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված (հատկացվող) դրամական միջոցների (այսուհետ՝ դրամական միջոցներ) հաշվին ծախսերի կազմակերպումն իրականացվում է ընկերության բանկային սպասարկումն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության գանձապետարանում բացված գանձապետական հաշվով (հաշիվներով):

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով հատկացված և չծախսված դրամական միջոցների փոխանցումն ընկերության բանկային սպասարկման համար բացված գանձապետական հաշվին (հաշիվներին):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ